ԳԱՂԱՓԱՐ, ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ, ՆՊԱՏԱԿ

1987 թվականից ՀԽԱՀ- տարածքում սկսեց ժողովրդական շարժման անանախադեպ վերելք: Այն սկսվեց հանրապետության կենսոլորտի փրկության համար մղվող ցույց-հանրաժողովներով, հետո կտրուկ շրջադարձ կատարեց ԼՂԻՄ-ի հարցի վրա: Իհարկե դա ուներ իր պատճառները: ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը, ելնելով իր վիճակի ահավորությունից, կանգնած լինելով անվերապահ բռնաճուլման վտանգի առաջ, վերջին ճիգը գործադրեց փրկելու իր մի կտոր հայրենիքը: Իրադրությունը ոչ մի քննարկում չէր հանդուրժում: Պետք էր օգնել արցախահայությանը և մենք մի մարդու պես ոտքի ելանք: Կենսոլորտի համար մղվող պայքարի միակ օգուտը կարող էր լինել այն, որ հայ ազգը հասկանար իր ԽՍՀՄ-ի տարածքում անվտանգ գոյատևելու անհնարությունը, իսկ ԼՂԻՄ-ի խնդիրը ոչ միայն անհույս էր, այլև վտանգավոր էր նրանով, որ իրական էր դառնում ազգամիջյան ընդհարումների վտանգը, կարող էր անվերջ դոփել տեղում, կամ ողջ ազգային շարժումը տանել անպտուղ ուղղությամբ: Բայց, իհարկե, մենք ընտրության իրավունք չունեինք: Այս ամիսների ընթացքում մենք կատարեցինք գործողություններ, որոնք ժողովրդական շարժումը պահում էին որոշակի մակարդակի վրա, բայց վերջնական հաղթանակի չբերեցին, ասենք չէին էլ կարող բերել: Պատճառը հետևյալն էր. ԼՂԻՄ-ի հարցը նեղ ձևով, առանց մյուս ազգային խնդիրներին միացնելու, լուծել հնարավոր չէր:

Մոսկվայի դիրքը այս հարցում խիստ որոշակի մերժողական էր: Դա նշանակում էր պայքար, ընդ որում համազգային պայքար՝ իր ողջ ճակատով: Դա նշանակում էր համազգային պայքար, որի առաջը հենց սկզբից

ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի, 1988 թվական, էջ 11

փակված էր, և որը նշանակում էր անմիջականորեն հակադրվել ԽՍՀՄ-ի կառավարությանը: Ի՞նչ ուղղությամբ պետք է գնային: Շարժման առաջին փուլի ղեկավար Հզոր Մուրադյանը սկզբում փորձում էր գնալ հարցը ծայրահեղության չհասցնելու ճանապարհով: Չունանելով քաղաքական բավարար փորձ, և սխալ պատկերացում ունենալով թե ներկա քաղաքական իրադրության, թե պատմության մասին, փորձում էր ներշնչել ԽՍՀՄ-ի կառավարությանը, ռուս և հայ ժողովուրդներին, որ գոյություն ունի այնպիսի քաղաքական իրավիճակ, երբ ռուսները պետք է կողմնորոշվեն դեպի հայերը և վարեն աղրբեջանցիների նկատմամբ զգուշավոր քաղաքականություն: Իհարկե նրա փաստարկները անհամոզիչ էին, հետևաբար մերժվեցին: Հենց այդ ժամանակ էր, որ շարժումը իր տարերային բնույթը պետք է փոխեր և ավելի լուրջ կազմակերպվեր: Ցավոք, պարոն Մուրադյանը դրսևորեց հայացքների սահմանափակություն: Առաջարկեց ցրվել տները և Արցախը հայերով բնակեցնելու, այն Հայաստանին տնտեսապես կապելու շնորհիվ, ժամանակի ընթացքում միացնել Հայաստանին: Վերջում էլ կոչ արեց պաշտպան կանգնել Կարեն Դեմիրճյանին, չնայած նա օգնություն ոչ մեկից չէր խնդրել:

Ժողովուրդը իր առողջ բնազդով զգաց այդ կոչերի անօգուտ, անկիրառելի լինելը:

Նոր կոմիտեն փորձեց շտկել դրությունը: Ընդհանրապես դրական տեղաշարժեր տեղի ունեցան: Ստեղծվեցին նոր միավորումներ ու կազմակերպություններ: Փորձեր եղան Արցախյան շարժումը միավորել ազգային մյուս շարժումների հետ և դրանով ուժեղացնել միմյանց: Փաստորեն Արցախյան շարժումը վերածվեց համազգային շարժման, բայց չկարողացավ լուրջ ուժ դառնալ: Պատճառն այն էր, որ Արցախյան շարժումը առաջնային տեղ գրավեց համազգային շարժման մեջ և թույլ չտվեց, որ շարժումը որոշակիացնի այն համազգային գաղափարը, որի հետևից պետք է գնային: Այստեղ մեղավոր էին, իհարկե, գլխապտույտ արագությամբ զարգացող իրադարձությունները և շարժման մի շարք ղեկավարների անվճռականությունն ու սահմանափակությունը:

Ինչպես վերը նշվեց Արցախյան շարժումը պետք է ուժեղանար՝ միանալով համազգային շարժմանը: Միայն համազգային ճակատի հաղթանակը կարող է ինչ-որ կերպ լուծել Արցախյան խնդիրը: Ինչպիսի՞ն պետք է լինի

Ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի. 1988 թվական, էջ 12

այդ շարժումը: Ի՞նչ դրոշի շուրջ այն պետք է համախմբի ազգին:

Մարդկության պատմության փորձը հուշում է, որ բոլոր ազգերն ու ժողովուրդները կարող են գոյատևել, պահպանել իրենց լեզուն ու ազգային առանձնահատկությունները, բարգավաճել միայն անկախության պայմաններում, միայն ազգային պետականություն ունենալու դեպքում: Հայերը բացառություն լինել չեն կարող:

Ղարաբաղյան և Հայոց համազգային շարժման ղեկավարները արդեն շատ ամիսներ չեն կարողանում ստեղծել մի այնպիսի գաղափարախոսություն, որը կարողանա համախմբել ողջ ազգին և որի շնորհիվ կարողանանք բավարար քաղաքական կշիռ ստանալ, թե ԽՍՀՄ-ի ներսում, թե ողջ աշխարհում: Բանն այն է, որ Ղարաբաղյան շարժման ղեկավարների մեծ մասը չի ընդունում Հայաստանի անկախացման գաղափարը, համարում է այն առայժմ անկիրառելի և նույնիսկ վտանգավոր: Դա լուրջ սխալ է: Նախ իրավազրկված, փաստորեն պետականությունը կորցրած ազգը, բացի անկախանալուց, ուրիշ ոչ մի պայքարի ու գոյատևման ճանապարհ չի կարող ունենալ: Ազգի խնդիրները, լինեն տարածքային կամ մեկ այլ տեսակի, կարող են լուծվել միայն ինքնուրույն պետականություն ունենալու դեպքում: Սա պատմականորեն հաստատված ու ապացուցված ճշմարտություն է: Պետականություն չունեցող ազգի համազգային գաղափարախոսությունը կարող է լինել միայն պետականությունը վերականգնելը և նրա անկախությունը պահպանելը: Հենց միայն գաղափարի որոշակիացումը արդեն բերում է պայքարի ուղու որոշակի դառնալուն: Կարելի է անել շատ հաջողված քայլեր, բայց հնարավոր չէ հաղթել, մինչև չլինի գաղափար, նպատակ: Քանի որ բացի պայքարի սահմանադրական ճանապարհից, մեկ այլ ճանապարհ գոյություն չունի մեզ համար /այսինքն այլ ճանապարհը միայն բոնություն է, իսկ դա անկիրառելի է, որովհետև անընդունելի է որպես միջոց/, ուրեմն մենք կարող ենք գործել միայն ելնելով ԽՍՀՄ-ի և ՀԽՍՀ-ի սահմանադրություններից: Ատիճանաբար, սկզբում սուվերենությունը վերականգնելու ձևով անկախանալը, գոյություն ունեցող սահմանադրության պայմաններում անհնար է, որովհետև այն իրավաբանական լուրջ հիմքեր չունի: ԽՍՀՄ-ի կառավարությունը էատոնական ԽՍՀ-ի վերաբերյալ բավարար հստակությամբ հայտնեց իր դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ:

Միայն մի իրավունք կա, որի առաջ ոչ մի առարկություն չի կարող

լինել որևէ ժողովրդի կամ կառավարության կողմից՝ դա ազգերի ինքնորոշման իրավունքն է: Դա միակ իրավաքանական հիմքն է, որը կարող է ապահովել բոլոր օրինական գործողությունները՝ նպատակին հասնելու ճանապարհին: Ինքնորոշումը ազգային պայքարի նպատակն է և հենվում է ԽՍՀՄ-ի սահմանադրության 72-րդ կետի վրա:

Այդ նպատակային ծրագիրը իրականացնելու համար գոյություն ունի մի ձև, մի միջոց, դա հանրաքվեն է: Միայն այդ ճանապարհով կարելի է բավարար իրավական հիմք ունենալ ինքնորոշվելու համար: Հանրաքվեի առկայության դեպքում, ժողովրդի անկախացման դեմ կատարվող բոլոր տեսակի գործողությունները կդիտվեն որպես անիրավական բռնություն, ուրիշի տարածքի նվաճում: Համենայնդեպս կարելի է ասել հաստատ. ազգի համար անկախությունից բացի այլ ընդունելի զաղափար լինել չի կարող: Անկախության հասնելու համար բոլոր ճանապարհներից միայն պիտանի է սահմանադրական ուղին և այդ իսկ պատճառով ինքնորոշումը միակ ճիշտ նպատակն է: Ինքնորոշվելու միակ իրական ճանապարհը համաժողովրդական հանրաքվեն է, որովհետև միայն այդ դեպքում ժողովրդի կամքը կդիտվի իրավաքանական տեսակետից, անքասիր:

ՋՈՒՐԱԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ